

ներուն միջև։ Սքանչելի՝ անոր համար, ուրավհետեւ ճիշդ նոյն ոդին կ'անդրանցնի մեր և հրեայ ժողովուրդին կեանքը շինող իւտէալներուն մէջէն, երբ զարը ըրաւ Առառուածաշունչը մե՞ր գիրքը, մեր պատմութիւնը այնքան նմանեցաւ անոր ներկայացուցածներուն որ կարելի պիտի ըլլար դայն ևս կոչել նոյնպէս։ Մակարեանք և Վարդանանք ոչ միայն երկու ցեղերուն մէջ նոյն գիծի եկող մարգերուն, այլ նաև նոյն ոդին գերազանց մարմնացումներն եղան։ Ու Արքալանը այդ նոյնացումները կուտայ ինչն գանի ու խանգավառ տողերու մէջ, համոզուած կարծես իր ցեղին ալ և ընտրեալ ըլլալու հանգամանքին։

Ս. Գիրքէն ընտրած իր կտորները։ Ըլլան անոնք արձակ կամ չափական ձեւերու մէջ կաղապարուած, տուած է մաքուր աշխարհաբարով և առանց ձեւազեղծութիւն։ Անոնք պիտի կրնան ըլլալ Աստուածաշունչի ի նորոյ աշխարհաբարի թարգմանութեան մը համար՝ սքանչելի նպաստներ։ Իր մէջ անոնք կը մատնանշեն թարգմանուզի խորունկ ճաշակ մը, և ընտանութիւն՝ մեր նախնեաց գեղեցիկ գրաբարին։

Չէ մոռցած իր ստանաւորներէն ալ նմոյշներ գնել իր գիրքին մէջ։ Անոնք լաւ յանգաւորումներ են երաժշտական գընացքի մը մէջ զրուած։ Իբրև բանաստեղծութեանց չէ որ կը մօտենանք անոնց։ Մրազանը հեռու է այդ յաւակնութիւնը ունենալէ։ Անոնք աւելի գրքի պատմութեաներուն պատշաճեցումներ են։

Իր գիրքը, ամենայն դէպս, մեր կրօնական գրականութեան կալուածներէն ներու կը բերէ նոր շունչ մը։ Պէտք ունինք ցեղացին վերազարթնութիւն մեր նախնեաց կ'անքին մէջ, երբ ամենէն աւելի կը սպառնան ձուլումի հեղեղները մեր գոյութեան։ Այսպիսի գիրքեր պիտի կրնան ունենալ ճակատագրական արգինք մը, փոխադրելով իւրենց պատմումներուն մէջէն, ամէն անհատ իր ժողովուրդի կեանքին, ու ամէն ըմբռնում՝ միակ ըմբռնումին որ հաւաքականութեանն է։

Կը սպասենք յաջորդներուն։

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԵ ՅԱԿՈԲԱՅ

ԷԵ

Պլըմպիկ Սահակ վրդ. առ Եղիազար կարողիկոս (*):

Ծնորհազարդ և երջանկափառ, մաքրափայլ և սրբասնունդ, երիցս երանեալ և հոգիակիր, քրիստոսապատ տեառն մերոյ հայրապետի ամենայն հայոց եղիազար կաթողիկոսի և քաջ հովուապետի և պատրիարք սուրբ յերուսաղիմայ, նըւաստ և սարուկ ծառայից ծառայէ Սահակէ սպասաւոր բանի խոնարհեալ երկրպագութիւն սուրբ գարշապարացգ և համբոյր տատուածացեալ սուրբ աջոյգ և հարցանեմք զօրպիսութենէ սուրբ հօրդ, զոր ի գառն և ի վշտաշատ և ի բազմաչարչար ժամանակիս կրեցեր ի յանաստուած և ի մոլար արանց և սուտ քրիստոնէից և ի յորովայնամոլ և յարբեցող և յերկաբնակ չԱկոր զայթակլեցուցչն լցեալն ամենայն գարցութեամբ և քակին երկու սուրբ աթոռոցն և խաւար ածողն ի վերայ հայկազեան սեռին. և խնդրեմք ի յամենագօր երկնաւոր թագաւորէն Աստուծոյն մերոյ, զի զցանկալիդ ամենայն ազանց կարողացուցէ և զօրացուցէ ընդգէմ հակառակողաց քոց և իբրև զջահ անշիշանելի՝ փառօք պահեսցէ ի պարծանումեր և ամենայն ազգի։

Գիտութիւն տէրութեան քում եղիցի և չնորհաւորութիւն գերազանց աստիճան հայրապետութեանդ և կաթողիկոսութեանդ եղիցի, Աստուած բարով վայելել տացէ մինչև ի խորին ծերութիւն։ Հա՛յր սուրբ, ահա՛ այստեղս Մինտարճին կաշառ ասեալ ի վաճառականացն և երկու բանադրանաց թուղթ գրեաց վասն քո, մէկ ի Հալապ լրեաց և մէկն՝ ի Ստամպօլ և մէկ թուղթ յերուսաղիմայ Աստուածատուր վարդապետին գրել կու տան բանադրանք վասն քո, և Տէր Ղուկասին հետ ի Պուրսա կու զրկեն որ բերէ ի Ստամպօլ Մարտիրոսին տայ։ Արժանի է որ չԱկորն և չԱստուածա-

(*) Ընդորինակութեան մէջ նամակիս վերնազիրն է «Նոյն Ղըմպիկ Սահակի կեղծաւորեալ թուղթն է առ Վեհս չարաբանեալ զՅակոր կաթուղիկոսն իւրովինն կնքեալ»։

տուրն չաւուշով կառամօք ի տեղդ բերել տաս և նոցա պատիմն ի տեղդ հատուցանես, զի արժանի են մեծի պատմոյն Ելչի ձեռօք կամին բան շինել. յորժամ ի տեղդ դայ, պատրաստ կաց և մի՛ վախենար, զի այս տեղաց վաճառականքն մէկ ստակ տըլուզ չկայ, ոչ փոխ կուտան և ոչ օգնութիւն կու հասանի Մարտիրոս Թամարին, այլ մեծամեծ համբաւն կայ վասն երկուցանելով բղլուզան, և այլ տեղաց օգնութիւն ոչ ունին: Այլ զօրացի՛ր և քաջ լ'ը չնորհօք Քրիստոսի ընդուժմ թշնամիւց քոց, հա՛յր սուրբ, զի ահա չ՛լկոր կաթուղիկոսն զիւր եղբօրորդի Մանրէլն սուրբ Մարգար պահոցն յղեաց առ փափն ֆռանկաց, բազում նշխարք տանելով բնդ իւրն, զ Հոփիումիացն, զ Գայլիանեացն և զ Նախավկային, ևս և այլ բազում նշխարք՝ ընծայ փափին, զի և նա բազում գանձու տացէ նմա, և սա առեալ գնասոցէ ի Վրաց տուն և զ Մանրէլն օծեսցէ թագուոր հայոց: Ահա երկարնակութիւն սորա, որ ծածկեալ ունէր ի սրբի իւրում, ի ձեւն Ոսկան վարդապետին միաբանութեամբ փափին կատարեց, զ Ա՛վ հրաւալին բարձին, զի երկու հազար շարակնոց պասմայ է տըւեր Ոսկանն, երեք շարակնոց բերեն ի զմիր, տեսան որ Ով հրաշալին չկայր ի մէջն, մէկ շարակնոցն իւրեանց հետն տարին յերուսալէմ և մէկ Եջմիածին զրկիցին և մէկ այստեղս վաճառականաց մէջն է: Մինչև ի Սուրբ Խաչ բավանդուկն կու դայ, որ ամենեքեան աչօք իւրեանց տեսանեն զմոլորեալ գործն չԱկորին և դայթակղութիւն ժողովրդեան և թերութիւն հաւատոցն: Հա՛յր սուրբ, զի և մեղ բազում վիշտ և նեղութիւն հասոյց անիծեալ չԱկորն. վասն ազահութեան իւրոյ յղեաց զմեկ ուրեք ուրեք անյայտ տեղիս շրջել և իւր պաշար հաւաքիլ, և մեք ըրջեցաք և բերեալ ի զմիր վկայական զրով զամէն յանձնեցաք ինքն, և նա ոչինչ համարելով զայնքան աշխատանքն մեր, և զմեզ յետս ձգեալ ի տեղս և ոչ ետ պատասխանի, և ի ճանապարհին չաւուշին փուչտ տղայի խօսքով կու ելանէ մէկ թուզթ կու զրէ ի վերայ վաճառականացն թէ Այսչափ ստակ է զոլացեր, ի ձեզ մատնեցի, զորա դատաստանն զուք արարեք: Եւ յորժամ եհաս թուզթն ի սոցա ձեռն, իրրե անօրէն զազան յարեան ի վերայ իմ, և զոր ինչ ունէի

առին յինէն՝ մերկ ի մօրէ արարեալ զիս և թողին, և ես խեզ և ողորմելի եղեաց՝ մնացի անօդնական յամենայնէ. այլ կամ և մնամ ողորմութեանն Աստուծոյ և օդանականութեան, և ի սուրբ հայրդ աղաչեմ ապաւինելով, զի ձեռն տացես անկելոյն և խորտակելոյս, իրրե յոչնէ յարուցցես զիս, զի մշանջենաւոր ծառայ քո եմ Խնդրի՞ և աղաչեմ արտասուօք, զի մխիթարեացես զմեզ օրհնութեան նամակիւ, զի ուր և զնամք՝ ընդունին զմեզ և քարոզեմք զանասուած զսրծ նոցա, զոր հատուցին առ սուրբ տունն Աստուծոյ դատաստանի և ի սուրբ հայրդ անխափ զչարութիւնն իւրեանց անպատկան ի մարդկանէ: Այլ որս պէս հաճոյ թուի Տեառնդ վասն իմ՝ բարի է ինձ և կամ հոգւով և մարմնով հնագանդ մահու չափ: Ողջ լիցի տէրդ մեր և հանուրց՝ ըստ ամենայնի յաջողմամբ ի պարձանս մեր և մերոյ ազգի ամենայնի չնորհօք սրբոյն զարգարազի էիցս, ամէն: Հա՛յր սուրբ, Ստեփանոսն այս տեղս ինքար արար զիւր տված թամասութներն. խօճա Պաղտասարին Աստմի բանին համար պատճառեաց՝ թէ Եղիազարի քովի զնաց, վասն այն ես ինքար արարի, այլ յորժամ զնացին ի Մարմարիս յիտ հոգեւոր տիրոջն, ինքն խօստովաներ էր նորա՝ թէ վասն զնալոյ նորա ես ինքար արի. ապա ճշմարիսն խօճա Պաղտասարն է և Աստմի սոււտ: Ահա հոգեւոր տէրն մէկ օրհնութեան թուզթ էր առաքել Պաղտասարին՝ թէ քո բանն ճշմարիտ է և Աստմին՝ սոււտ, և այլ բազում բանս զրեալ կայր: [1666]:

ԻԶ

(Խոնա Պաղտասար Կ. Պոլսէն առ Եղիազար կարողիկոս):

Պանծալի և բաղձալի քահանայապետիդ մեծի և գերապատիւ հայրապետի հանուրց հայտատանեաց տեառնդ Եղիազար կաթողիկոսի և սրբազանի մատուցանիմք զծառայական երկրագործութիւն փարելով ընդ տեառնդ երկնաչու զարշապարացդ նըւառացեալ որդի քո կրտսերագոյն Խօճա Պաղտասար և համարձակիմք առ ի հարցանել զորպիսութեանց տեառնդ՝ թէ սրբէս իցէ

կեալդ ի վայրո՞նժդեհութեան, զոր Տէր Աստուած անվրէպ պահեսցէ ի պարծանս մէր և ամենայն աղջի թարց իմիք վեսուու, իրը զջահ լուսալիր աշտանակին բարձու, ամէն,

Դիտութիւն քումդ վեհանձնութեան եւ զիցի, հոգեսրտէ՛ր, եթէ զտեղւոյս որպիսութեանն հարցանես, յառաջ քան զայս զրեցաք զոր ինչ եղեալն էր, որոյ առ վեհու հասանեն ոչ զիտեմ հաւաստի, բայց այսմ մերս խորհրդածութիւն և արարք այս եղեւ և խնդիրք վասն Սահակ վարդապետին, որ է ի տեղս անկեալ խեղճ և ողորմելի ամենայն կողմանէ, զոր անիրաւ և անողորմ և յանասուուած չԱկոր գալթակլուն բազում կերպի նեղութիւնն հասոյց որքա, որպէս հրամանքդ մասն ինչ լուեալ ես վասն սորա եղեալ վեսուն. այլ ինք մըշտարհամարհէ և անարգէ զչԱկորն և զնւանողն իւր, և զվեհս միշտ բարձրացուցանէ և զովէ ի լոելիս հակառակողացն, վասն որոյ յարնդրեմք ի քէն վասն սիրոյն Քրիստոսի և մեր խաթերն համար Սահակ վարդապետին մէկ օրհնութեան նամակ առաքես, որ և ընկանց երկիւղի ի մէջ ժողովրդեան հրամանաւ տեառնդ, քարոզէ զանառուուած զործն չԱկորին և չՄարտիրոսին ի լոելիս ամենայն ժողովրդեան, որ հաւատարիմ ծառայ քո է: Հա՛յր սուրբ, զիտեմ որ ոչդ տեղդ ոմանք կարգաւոր և ոմանք աշխարհականք չարախօսեր են վասն սորա առ վեհու՝ թէ նա չատ վես հասոյց անառնդ և վանիցն. մի՛ հաւատար, սուա է, սա բանի խապար չունի. չարութիւն Արդիս վարդապետէն է եղեր, սա ի մէջն զուլեր է. սորա ձեռքն ի՞նչ հրաման լինի, որ այնպէս բան անէ. և ինքն երգմամբ հաստատեաց՝ թէ էն բանի խապար չունիմ, միայն նոցա քովն կու զնայի և զայի, կ'առէլն թէ սա այլ բանի վերայ է. զուր չատ են ասացեր սորա, չի հաւատաս. թէ չիտակ այլ լինի, մեր խաթերն համար խնդրեմք զոր զանց առնես. զուր զալաթուրզ օլմազ, այնպէս կու լինի. զի ծառայ քո է, որպէս վայել է մեծի անյիշաչարութեան քում, ընդունել զսա որպէս անառակ որպի զիմելով առ հայրդ, և օրհնութեան թղթիւ միսիթարեսցիս և շահեսցիս, և ոչ անտես առնել, և աղաչեմք ի հեռաստանէ իրը ի մօստոյ, և զաջ սուրբ հայրապետիզ համբութեմք, զի մի անտես առնես զիմնդրուածս

մեր, այլ վաղվաղակի կատարել զիմնդրք մեր: Հա՛յր սուրբ, խնդրեմ որ հրամանքդ մեր բանին մուխայաթ կենաս, գիտեմ որ մեր եղբայր Ապրօ Զէլէպուն գլուխն դատարկ չէ, քիչ մի բանի անհոգ կու կենայ, մեր աչքն ի ճանապարհին է, խապարի կու նայինք: Հա՛յր սուրբ, յորժամ բաժանեցաք ի վեհեղ և եկաք եղմիր, տեսաք որ հոգեսրտէրն մէկ օրհնութեան նամակ էր առաքեր ի վերայ մեր՝ թէ Ստեփանոս վարդապետն ի ճանապարհին ինձ խսուազանեցաւ և ասաց՝ թէ Պաղտասարն Եղիազարին քով գնաց, նորա համար ես զիմ տըւած թղթերն ինքար արարի. ապա ճըշմարիտն այս է, որ Առոմին բանն սուա է, Խոճա Պաղտասարին բանն շիտակ է, որ իմ վկայական թղթերի մէջն գրեալ կայ, և այլ բազում վկայից կնքեալ կնքովն, որպէս ի գիտող ժամանակի զԱկորի առաքեալ թուղթին առ իս յայտ առնելոց եմք սուրբ հօրդ: Դարձեալ մեր եղբայր սիրելի Ապրօ Զէլէպուն չատ կարօտիւ ողջոյն և սէր մատուցանեմք: Խնդրեմք վասն Աստուածոյ և մեր խաթերն համար Սահակ վարդապետիս համար հոգեսրտիով աջն համբութես և բարեիխաւս լինիս, որ մէկ օրհնութեան նամակ զրկես սայուն հետ, մեր սորդին է, ի մեզ է ապաւիներ, այլ ճար չունի, չատ հաւատարիմ է մեզ և հոգեսրտիով յամենայն կողմանէ. չի լինի թէ մոռանաս կամ անտես զիմնդրուածքն մեր: Սիրելի եղբայր, խնդրեմ որ մեր բանին պէճիթ կենաս, թուղթին եկած լինի՝ ողարկես որ գայ և ձեր սորպեսութիւն մեզ զամենայն անպատճառ ծանուցանես: Ողջ (լեր) ի Հոգին Սուրբ հանգերձ աշակերտեալ մանկամբք: Գրեցաւ թվին հայրց Խձնեֆ ան (1115) (= 1666): Խնդրեմ որ այս սայուս հետն զպատասխանի թղթերոյն վաղվաղակի առաքես:

Հրատարակից՝ Մ. Ե. Ն.

